

Նըման է բանի տընտեսն եւ խայթոց ունի զէտ մեղու.
Պաշտօն յամենց ուզէ, չասէ զանձն իւր մահկանացու:

Ի Բ .

Լաւ մարդ ես նորա ասեմ որ բանայ զբերանըն համով.
Էնցեղ լեզուն գին չունի, թէ լընուն տուն մի ջաւհարով.
Աստուած երբ զաշխարհս արար, զհողն ու ջուրն ու զօդըն հըրով,
Մըթխալ մաւելի չարար, այլ կըշռեց զամենըն չափով:

Ի Գ .

Լեզուն է գործիք բանի, արդարոյն՝ զերդ խալաս ոսկի.
Մարդոյն է մէկ փերթ աբել եւ օձին է երկու ճըղի.
Այն մարդն որ երկու խօսի, զմէկըն քաղցր եւ զմէկըն լեղի,
Օձին է եղբայր եղեր եւ զնորա անէծքն ընդունի:

Ի Դ .

Ծառին ճիւղն երբ չոր լինի, ո՞վ մընայ թէ իսկի ծաղիկ:
Սպիտակ մազն որ սեւ ներկեն, ո՞վ ասէ թէ ըսպիտակի.
Բայց մարդ մեղաւոր ու սեւ ես գիտեմ որ կու սպիտակի.
Աստուած մէկ բանիկ կ'ուզէ որ ասէ «մեղա՛յ» ու քաւի:

Ի Ե .

Կաֆայ մի կամիմ ասել որ արժէ ջաւհար մի բոլոր.
Մարմինդ է ի նաւ նըման, խելքըդ ծով թէ չունի ժըխոր:
Զմիտքըդ նաւավար դու տես, որ բարձեալ է զանձ շահաւոր.
Թէ յեզր ի ծովուդ հանես՝ նայ առնէ ըզքեզ փառաւոր:

Ի Զ .

Կանթեղին մըտիկ արա՛, ջուրն ու ձէթն ու հուրն ի լըման.
Կանթեղըն մըտաց նըման, ջուրն՝ ուսման, ձէթըն՝ գիտութեան.
Քանի զմիտքըդ սուրբ ունիս ու ջանիւ ես սիրող ուսման,
Յոգիդ է պայծառ գունով, որ լոյս տայ քեզ ի մըթութեան:

Ի Ը .

Հաւատն է անառիկ բերդ՝ ով առնէ ըզնա հայրենիք,
Թեպէտ թշնամիք ուն որ բերեն շատ մըճեր ու նիգ.
Թուման մի հեծել կանգնի ու լինի յինքըն նետաձիգ,
Նայ զայն մասխարայ դընէ եւ թքնու զինչ ի խամաճիք: